

ԱՐԻՈՒԲՅԱՆ
ՄԵՏԱՂ

Այնուհետև Անայն

ԱՐԻՈՒԲՅԱՆ ՄԵՏԱՆ

ՎԵՊ



ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.19-31 Սյունե Սևադա
ԳՄԴ 84(5Ը)-44
Ս 637

Սևադա Սյունե
Ս 637 Արիության մետաղ: Վեպ / Սյունե Սևադա.- Եր.:
Newmag, 2025.- 248 էջ

Մնալ ցավի մեջ, թե՞ դուրս գալ թեկուզ սողալով: Անցյալը բերե՞լ ներկա՝
փորձելով լուծումներ գտնել, թե՞ փակել ու շարժվել առաջ: Որոշ իրավի-
ճակներում այս հարցերի պատասխանները հստակ չեն, ու թվում է՝ հուշերի
խեղդող ալիքներն արդեն հեռվում են, բայց հանկարծ պարզվում է, որ դառը
օրերի համառ ու սառը ցնցուղը մշտապես գլխավերևում է՝ պատրաստ
փայտացնել կամ էլ... սթափեցնել:

Որտե՞ղ սկսվեց ու որտե՞ղ կավարտվի ներքին կռիվը: Այս հարցերի պա-
տասխաններն են փնտրում «Արիության մետաղ» վեպի հերոսները, որոնք
այսօր բախվել են անցյալի ծանր փորձություններին, որոշումներին ու թու-
լություններին և պետք է հասկանան, թե ինչ է պետք անել ապագայի հետ:

Այս վեպը փորձում է հիշեցնել, որ ամեն ոք իր ներսում ունի արիության
սեփական մետաղը, բայց թե ինչպես այն կկիրառի, ի՞ր ընտրությունն է:

ՀՏԴ 821.19-31 Սյունե Սևադա
ԳՄԴ 84(5Ը)-44

Գլխավոր հովանավոր՝
«Սպարսիս» մարկետինգային
ընկերություն
sparsisagency.com

Տ Ս Ք Ս Ս
marketing agency

Հովանավոր՝
«Բիզնես Պարկ»
bpark.am



ISBN 978-9939-967-74-5

Սյունե Սևադա «Արիության մետաղ» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Գլուխ 1	Ռետրակտոր	9
Գլուխ 2	Կատետեր	18
Գլուխ 3	Զոնդ	34
Գլուխ 4	Էլեկտրոկոագուլյատոր	51
Գլուխ 5	Լանցետ	63
Գլուխ 6	Էնդոսկոպ	73
Գլուխ 7	Սեղմակ	84
Գլուխ 8	Շարից	92
Գլուխ 9	Ունելի	110
Գլուխ 10	Ստետոսկոպ	119
Գլուխ 11	Ռեզեկտոսկոպ	128
Գլուխ 12	Տրոակար	137
Գլուխ 13	Բժշկական դիմակ	144
Գլուխ 14	Մկրատ	164
Գլուխ 15	Սղոց	181
Գլուխ 16	Պուլսօքսիմետր	194
Գլուխ 17	Բիստ	209
Գլուխ 18	Սպեղանի	217
Գլուխ 19	Առարկայական ապակի	220
Գլուխ 20	Վերք	235
Գլուխ 21	Կար	237
Գլուխ 22	Կյանք	241

«Վայ քեզ, եթե երջանկությունդ մեռած համարես սուկ այն պատճառով, որ պատկերացնում էիր այն բոլորովին տարբեր քեզ շնորհված երջանկությունից: Վայ քեզ, եթե ունակ ես ընդունել միայն այն երջանկությունը, որը համապատասխանում է քո սկզբունքներին և ուխտերին: Վաղվա երազը բերկրանք է, բայց վաղվա բերկրանքն ուրիշ կլինի, և ոչինչ, բարեբախտաբար, նման չի լինի երազանքին, որը մենք ինքներս ենք արարում մեզ համար, քանզի միայն տարբերությունն է որոշում ամեն ինչի արժեքը»:

Անդրե փիդ
«Երկրային անուրջներ»

* Թարգմանությունը՝ Արմեն Ամիրխանյանի

Ռեառակտոր

— Ձայներ չեն, չէ՞: Մարդու, կենդանու...

— Չէ՛, այդպիսի ձայներ չեն: Աղմուկ է, ավելի ծիշտ՝ խշշոց: Ոնց որ ռադիոյից... Երբ ավիքը դեռ չես բռնել:

— Հաճա՞խ է լինում:

— Չէ՛, քչացել է, – մուգ կապույտ աչքերն անհանգիստ թափառում են սենյակում, – բայց ավելի ցավոտ են դարձել:

— Ի՞նչ նկատի ունես:

— Դե... Առաջ, երբ ընդհանուր վատ էի, էդ խշշոցը նույնիսկ օքեյ էր: Հիմա ոնց որ ֆիզիկական ցավ չունեմ, ու էդ ձայնը ներվերս սղոցում է: Ոնց ասեմ..., – ձեռքը սահեցնում է կարծ խուզած սև մազերի վրայով: – Սկզբում գլուխս ոնց որ պահեստ լիներ... Խառը, թափթփած, գրեթե աղբանոց: Որ մտածում էի, որ մի բան հիշում էի, աչքերս նույնիսկ մրմռում էին: Անձրևից հետո թաց հողի հոտը երբ քթիս էր խփում, ստամոքսս կծկվում էր: Մի քանի անգամ անձրևի տակ ենք ընկել. միանգամից այդ օրերն էի հիշում: Ի դեպ, գիտեի՞ք, որ անձրևից հետո խոնավության հոտը հատուկ անուն ունի՝ պետրի...

— Պետրիկոր: Արի չշեղվենք:

— Չենք շեղվում: Բայց վերջերս... գլուխս մի տեսակ մաքրվել է, կարծես ամեն ինչ իր տեղն է ընկնում: Միայն... դա է մնացել... խշշոցը: Էդ խշշոցը չի թողնում, որ մոռանամ: Հետ է տանում: Ու էդ ժամանակ սկսում եմ հիշել, ու ամեն ինչ փոխվում է. այլ ձև եմ շնչում, սիրտս թոքերիս մեջ է խփում... Գժի տպավորությունն եմ թողնում... Աննա՛: Կարծես թե ամեն բան անցել էր, բայց հիմա էլի...

Աննան խոր շունչ քաշեց: Իր 38 տարիներից 14-ն Աննա Սարգսյանը աշխատել էր որպես հոգեվերլուծաբան: Սկզբում ոգևորված էր սկսել, հետո հասկացել՝ ամենադժվարը մասնագիտության մեջ անկողմնակալ մնալն է, սրտին մոտ չընդունելը: Այդ պատճառով 2020-ի 44-օրյա պատերազմում կամավոր աշխատող հոգեվերլուծաբաններից առաջինը «շարքից դուրս եկավ» Աննան: Ուժեղ կոնտուզիա ստացած, վիրավոր ու հաշմված զինվորների հետ զրույցները հետապնդում էին ամբողջ օրը, ամեն րոպե, նույնիսկ քնած ժամանակ:

Պատերազմից հետո վերադարձավ առօրյա ռիթմին, սովորական այցելուներին: «Սովորականությունը» միակ փրկողակն էր՝ նախ սեփական հոգեկան հավասարակշռությունը վերագտնելու համար: Ու որոշել էր առժամանակ դադարեցնել պատերազմով անցածներին խորհրդատվությունը: Կվերականգնվի՝ կվերսկսի: Բայց 2021-ի փետրվարյան մի օր գործընկերներից մեկի խնդրանքով ընդունեց Ռուբենին՝ կարճ մազերով, երկնագույն աչքերով, հիմա արդեն՝ 28-ամյա երիտասարդին: Ատլետիկ կազմվածքով, քչախոս, զուսպ ու, հետո կպարզեր Աննան, չափազանց խոցելի և անպաշտպան: Իր գրանցամատյանում կարձանագրի.

«Ռուբեն Մանուկյան, 28 տարեկան: Արցախյան 44-օրյա պատերազմի վետերան: Հետտրավմատիկ սթրեսային խանգարում»:

Արդեն երեքուկես տարի ամեն շաբաթ հանդիպում էր Ռուբենին, չնայած պայմանավորվել էին 10 սեանսից հետո դադարեցնել: Հանդիպումները շատացան, բայց գտան լուծումը. ավելացրին միջակայքը: Սկզբում հանդիպում էին շաբաթական երկու անգամ, հետո՝ մեկ, տևական շրջան հանդիպում էին ամիսը մեկ անգամ, բայց վերջերս սկսեցին հանդիպել երկու շաբաթը մեկ՝ Ռուբենի առաջարկով: Ամեն անգամ Աննան ինքն իրեն խոստանում էր. զրույցը պետք է տևի մեկ ժամ, ոչ թե մեկուկես կամ ավելի, ունկնդրի «պոկերֆեյս» հայացքով, լսելիս ու պատասխանելիս չպիտի առաջ թեքվի, ու ամենակարևորը՝ ցույց չտա իր զգացմունքները: Իսկ դրանք խառն էին. պատերազմի մասնակցի հանդեպ հարգանքն ու հիացմունքը անչափելի էին: Զարմացնում էր, թե որքան արժանապատվորեն է իրեն պահում. խոսում է, բայց չի նվնվում, նկարագրում է, բայց չի դժգոհում: Բնավորությունից զատ՝ Ռուբենն ուներ ևս մեկ «թերություն»՝ աննկարագրելի առնական էներգիա ու հմայք: Աննան նկատել էր, թե ինչպես են կենտրոնի աղջիկները, հայացքները դռներին, սպասում, պատրաստվում նրա այցին, ինչ պատրաստականությամբ են բերում սուրճը՝ վատ թաքցրած ժպիտով, ինչպես են մինչև ելքը ճանապարհում նրան, ով եռամյա այցերից հետո դարձել էր կենտրոնի «մեր Ռուբենը»:

Իսկ նա հավանաբար չէր էլ գիտակցում իր արական մագնիսականությունը, չէր որսում հայացքները, այլ ինքնամփոփ հեռանում էր: Ու որքան էլ Աննան ջանում էր, իր ստաժավոր այցելուի ապաքինումն իսկապես դժվար էր առաջ ընթանում, և այդ հմայիչ երիտասարդը դեռ զնդանվաճ էր սեփական տագնապներում:

— Պայմանավորվել ենք, չէ՞, որ էլ չենք կիրառում նման բնորոշում քեզ բնութագրելիս և առհասարակ: Դու ուղղակի քո փորձառությանբ և զգացածով ես կիսվում:

— Լավ... Մի խոսքով: Էդ նույնները թեթևացել են, ինձ գրեթե նորմալ մարդ եմ զգում, դե, նորմալ ասելով՝ սովորական՝ բացի «պահեստի» ծայնից, – ասում է Ռուբենը մեղավոր հայացքով: Երբեմն թվում էր, թե ասում է՝ կներեք, որ չեմ շտկվում, ամբողջովին չեմ ապաքինվում:

Աննան չնկատելով միանգամից առաջ է գալիս.

— Շտապել պետք չէ:

Բաժակի մեջ ջուր է լցնում.

— Խմիր, ու շարունակենք: Մի քանի րոպե, եթե կուզես, կարող ես լուռ մնալ, հավաքել մտքերդ ու շարունակել, որտեղից հարմար կգտնես:

— Հա՛, շնորհակալ եմ, հիմա... – ջրից մի քանի կում է խմում: Բաժակն արև է կերել, ջուրը գուլ է ու ոչ հաճելի, բայց ասես օգնի թուլացնել մտքերի լարված կծիկը: – Աննա՛, իսկ նորմալ է, որ մտքերս ցրված են:

— Պատահում է՝ երբեմն նաև մտքերի ու ասելիքի առատությունից ուզում ես մի քանի բան պատմել ու խճճվում ես թեմաների մեջ: Բայց արի հերթով գնանք: Ուրեմն՝ քննարկում էինք՝ ինչու ես հիմա խշշոցն ավելի սուր ընկալում:

— Խշշոցից ավելի են... խեղճանում: Չէ՛, ճիշտ բառը չէ, երևի ավելի շատ ճնշվում: Հա՛, ճնշվում են, թևաթափ լինում: Ինձ անընդհատ փորձում են համոզել, որ ոչինչ չի եղել, ամեն ինչ անցյալում է, բայց էդ ուրվականն անընդհատ հիշեցնում է... «A Beautiful Mind» ֆիլմը տեսե՛լ եք:

— Ռասել Քրոուլի՞: Կիսատ են նայել, լա՛վն է, – Աննան ժպտում է:

— Հա՛: Նոբելյան մրցանակակիր Ջոն Նեշի մասին է: Նեշն ամբողջ կյանքում պարանոյիկ շիզոֆրենիա է ունեցել, որի մասին երկար տարիներ գլխի չէր ընկնում, քանի որ գաղափար չուներ, որ իրեն շրջապատող որոշ մարդիկ իր ուղեղի հորինվածքն են: Բայց խնդրի բացահայտումից հետո ինչ-որ պահից ուղղակի որոշում է նրանց անտեսել, երբեք չհաղորդակցվել հետներն ու ձևացնել, թե չկան: Ու կարողանում է փայլուն կարիերա ունենալ, ամուսնանում է, երկար ապրում... Ա՛յ, երևի իր նման: Ես համոզված էի, որ ձևացնելը, թե ոչինչ չի եղել, կօգնի ինձ: Մի պահ աշխատեց: Բայց էդ խշշոցը... ամեն ինչ հետ է բերում: Ինչո՞ւ է սրվել...

— Դու կարևոր բան նկատեցիր. Նեշը ձևացնում էր: Ձևացնում, որ չկան, ոչ թե վերացնում հարցը: Պարանոյիկ շիզոֆրենիայի դեպքում այլընտրանք չկա, և նա գուցե լավագույն մեթոդն է ընտրել՝ իրեն փրկելու, վիճակը չսրելու ու կյանքում հաջողելու համար: Ես պարզապես այնքան էլ համաձայն չեմ Նեշի ու քո միջև զուգահեռ տանելուն, որովհետև հոգեկան խնդիրներն այլ սպեկտրում են: Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը մի քիչ, գուցե զուտ սիմպտոմատիկ նմանություն ունենա շիզոֆրենիայի հետ, դա էլ կվիճարկեի, իհարկե... Բայց արմատապես այլ աղբյուր ու բուժում ունի: Նեշը գտել էր

լուծում անլուծելիի համար: Նման դեպքում, այո՛, աշխատող մեթոդ է: Քո դեպքում արի չարժեզրկենք արածդ աշխատանքը, ու հիշիր, թե սկզբում ինչ վիճակում էիր:

— Հա՛, ինչ խոսք, գլխացավերս, լսողությանս վատթարացումը: Գրեթե չէի լսում: Էդ ամենն ուղղվեց...

— Բա, տեսնում ես: Քո դեպքում կոնտուզիայից ու հոգեկան ցնցումներով պայմանավորված այլ խնդիրներից հետո հետցնցումները բնական են նույնիսկ տարիներ անց:

— Դե, հա՛... Ուղղակի արդեն շատ են հոգնել...

— Իսկ կա՞ ինչ-որ օրինաչափություն՝ երբ է, ինչպես դու ես ասում, գլուխդ խշշում: Օրինակ՝ առավոտյան, բարձր երաժշտությունից, կտրուկ շարժումից...

— Հատուկ պատճառ պետք չէ: Բայց ամեն անգամ տպավորություն է, որ ինչ-որ մտքից է սկսում, որը չեմ հասկանում:

— Այսի՞նքն:

— Դե, պարբերաբար զգացողություն է, որ ինչ-որ բան չեմ հիշում: Գիտեմ, որ չեմ հիշում, բայց թե ինչ չեմ հիշում, չգիտեմ: Ինչ-որ հիշողության կտորներ են լողում աչքիս առաջ երբեմն, ինչ-որ... իրեր են, հող, խոնավություն, ծառեր, դեմքի պատանիկներ, այլայլված հայացքներ, ձայներ... ու մեկ էլ ժապավեն:

— Ժապավե՞ն:

— Հա՛, գինու գույնի, կտորից, ճմռթված, կեղտոտ:

— Իսկ նման իր քեզ հանդիպե՞լ է պատերազմում:

— Չեմ հիշում: Ամեն անգամ, երբ աչքիս առաջ է գալիս, խշշոցը սկսվում է: Հետո մի քանի րոպեից անցնում է:

— Հնարավոր է՝ տրավմատիկ դրվագ կա, որն ուղեղը թաքցրել է անգիտակցական շերտում, որ գիտակցականը չվնասի: Լինում է՝ նման ուժեղ հոգեբանական հարվածնե-

րից հետո մեր հոգեկանը դիմում է տարբեր մեխանիզմների՝ ինքնապաշտպանության համար: Բայց իր թաքցրածը բացել է պետք, որ թաքնված տեղից չանհանգստացնի, չդառնա տրավմատիկ ֆոն, նոր խնդիրների չհանգեցնի, ու կարողանաս մաքրել հիշողությունը, բաց թողնել: Դրան էլ կհասնենք, մի շտապիր, կամաց-կամաց կգանք: Բժշկի հետ խոսել՝ ես խշշոցի մասին, գուցե մասնագիտական միջամտության կարիք կա:

— Ձե՛, զգվել եմ: Նյարդաբանին որ դիմեի, էլի դեղեր էր գրելու, երևի հոգեբույժի հետ էլ կկապվեր: Հակադեպրեսանտների կողմնակի ազդեցությունն է գուցե, չգիտեմ: Գուցե ես եմ շատ սևեռվել:

— Իսկ հակադեպրեսանտներն օգնո՞ւմ են, դեռ որքա՞ն պիտի խմես:

— Երկու ամիս: Մնացածները դեռ էլի կխմեմ: Նախորդը կիսատ թողեցի, հետո մեկուկես տարի չէի խմում, բայց փաստորեն կարիքը կար: Հիմա արդեն կավարտեմ ու հուսամ՝ էլ չեմ վերադառնա: Հոգնեցի դեղեր խմելուց: Այսօր ինչքան շատ ասացի, չե՞, որ հոգնել եմ: Հոգնել եմ հոգնելուց, – ականա բառախաղի վրա ծիծաղեց: – Մեր թերապիաներն ինձ ավելի են դուր գալիս: Ինձ որ մնար, միայն Ձեզ մոտ կգայի:

— Շնորհակալ եմ, Ռուբե՛ն, – Աննայի դեմքին բարի ժպիտ գծագրվեց: – Իրականում համատեղ աշխատանք է թերապիան, դեղորայքը. բոլոր գործիքներով է պետք ազդել խնդրի վրա: Եվ իրականում անողը ես չեմ, դու ես, ես միայն ուղղորդում եմ: Երեք տարում ահռելի գործ ես արել: Ի դեպ, գործի մասին: Աշխատանքի համար ի՞նչ որոշեցիր, դիմելո՞ւ ես: Հավանաբար նաև այդ որոշումդ է ազդում սրացման վրա: Ակնկալելի է, պիտի որ ընթացքից թուլանա ու թողնի:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark